ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 12 2022 թ.
№ ԿԼԱՍ/2-1634

«ՍԻԼՎԵՌ ԳԼԱՍ» ՍՊԸ-ի տնօրենին
ՀՎՀՀ 02597426
ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 127/5

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԻԼՎԵՌ ԳԼԱՍ» ՍՊԸ միջև 17.02.2021թ. կնքված N ԲՄԾՁԲ-21-7/1-2 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2021-2023թթ. մատուցել լվացքի հավաքման ծառայություններ, սակայն «ՍԻԼՎԵՌ ԳԼԱՍ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ 31.10.2022թ.-ից դադարեցնելու է վերը նշված ծառայությունների մատուցումը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը **06.12.2022թ.-ին** միակողմանի մասնակի լուծում է N ԲՄԾՁԲ-21-7/1-2 պայմանագիրը չմատուցած ծառայությունների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին «ՍԻԼՎԵՌ ԳԼԱՍ» ՍՊԸ-ից ենթակա է գանձման **4582937** ***ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին ենթակա է գանձման **5447190 ՀՀ դրամ** որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am